Անցած օրերը եւ կեանքերը, որոնք կարծես ընդմիշտ մոռացուած էին, ահա, դուրս են ցցում իրենց գլուխը եւ նայում են մեզ՝ տեւականութեան ճրագը իրենց աչքերում։ Այն ամէնը, ինչ որ թւում էր կորած, բռնում է նորից իր տեղը, կենդանանում է եւ ապրում ուրիշ ու նոր մի կեանքով։ Եւ այդ պատահում է ո՛չ մեծ այն դէպքերի հետ, որոնց սանդուղից բարձրացել ես, կամ իջել, այլ այն աննշմարելի եւ անցողակի երեւոյթների հետ, որոնք կայծի նման մարուել են վայրկեանների ծոցին։

Ժամացոյցներն առանց սլաքների եւ սակայն ա՛յնքան լեցուն ժամերով։

Այդպիսի պահերին, մարմինդ ռետինի պէս երկարում է։ Մկանունքներդ սեղմւում են. գրեթէ զգում ես արիւնիդ շրջանառութիւնը, ու մինչ զգայնութեանդ լարերի վրայ ներկան մաղ է ածում իր ծանր մատները՝ անցեալը բաց է անում իր գաղտնիքների արկղը եւ խաղում է մի թատրոն։

Ո՞վ է իմանում մեր մսերի վրայ դարերը ինչպիսի պատկերներ են գրոչմել։

Երակների մէջ արիւնը կեանքի ահագին կտորներ է քշում։

Ու պատահում է այնպէս, որ չնչին մի ինչ որ մգանակ կամացուկ վեր է ցատկում, այնտեղ, էութեանդ մութ մի անկիւնում, հրում է անտեսանելի մի անիւ, որը իր կողմից մղում է մի ուրիշին, բաց անում ապրումների մի աշխարհ, քայլում անծայր տարածութիւններում կամ իջնում ժամանակի զառիվերից դէպի այն անդունդը, ուր ոգիները քրտնաթոր զեռեղում են իրականութիւններից աւելի ներս դանուող մի տիեզերք։

Այն բոպէներին դու զգում ես խորապէս, որ այն ինչ որ անուանում ենք ամենօրեայ լինելութիւն՝ սովորութիւնների եւ դաստիարակութեան դիզած դիւրին պատկերների կուտակումը՝ ուրիշ բան չէ եթէ ոչ էականը մոռնալու մի միջոց, աչքերիդ առջեւ տատանուող մի շղարշ, պարիսպ, որի վրայից մարտնչում ես ինքդ քեզ դէմ եւ դերեզման՝ որի մէջ թաղում ես քեզ շրջապատող, կերպարանափոխուող աշխարհի հետ ունեցած թաքուն հաղորդակցութիւններդ։

* * *

Ի՜նչ լաւ էր, որ քամին թրթռացող իր թեւը զարնում էր վենետիկեան բոլոր քարերին։ Մեծ այդ դերեզմանում յիշատակները արթնանում էին, քանդակուած պատերի ծալքերում սարսուռ էր անցնում, տանիքների վերայից ոգիներ էին սողում, սիւները բարձրացնում էին իրենց գլուխը եւ արձանները շարժում էին ձեռքերը ու անբիծ աչքերի միջից նայում, նայում, նայում։

Դոժերի պալատի գոթական դրան մօտ, անկիւնի բազմագոյն մարմարների մէջ մխրճուած, կանգնել են պօրֆիրէ երեք հայ դիւուորները։

Կոլոր կալպակների տակ՝ նուշանման, զարմացած աչքեր, փչրուած քիթեր, առոյգ դէմքեր։ Երկայն, կիլիկեան շրջանի զգեստներ, հաստ գօտի եւ տափակ թուրեր։ Փարթամ եկեղեցու եւ դագաղաձեւ պալատի մէջտեղ, նրանք կանգնել եւ հանդիստ, ընդմիշտ անշարժ եւ խորհրդաւոր։

Ու անբիծ նրանց աչքերի մէջ՝ այնտեղ, Լագունայից եւ ծովից այն կողմը՝ աշունը եւ իր քամին տրորում են ամբողջ Կիլիկեան աշխարհը, նայում նրա քանդուած բերդերի կատարին, սողում փլատակների վրայ, բարձրանում Տաւրոս, Սեւ-Լեռան կատարին կանգ առնում երբեմնի Գոռոմողոլ գիւղում, ուր Ռուբէնը իր կտրիճներով առաջին թագաւորութիւնը հիմնեց, ու հազարաւոր ոգիների թեւը բռնելով, իջնում են Սիս եւ սարսափած տաւարի հօտի նման ցատկռտում են եւ ոռնում։

Ո՞վ գիտէ՝ ովքեր են երեք այդ անյայտները։ Իշխաններ, դուքսեր, քունդստապլ թէ՝ պարոնայք հռչակաւոր Անտիոքի տակ ընկած, Կոստանդին իշխանի խաչակիրներ, թէ՝ Լեւոն թագաւորի սպարապետներ։

Հրապարակի մօտ, հովը զարնւում է մարմարէ սանդուղներին, պալատների զարդերը ներս են մտնում, սիւների վրայ Աստուածաշունչի հերոսները դողում են, իսկ պօրֆիրէ հայերը մխրճել են իրենց աչքերը դէպի հեռա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան